

«ԾԻԾԵՌՆԱԿԸ ԲՈՅՆ ԿԸ ՇԻՆԷ...»

Իմ եւ ինձմէ մեծ սերունդէն իմ չի գիտեր Ղազարոս Աղայեանի գողտրիկ «Յիշողութիւն» բանաստեղծութեան հիմամբ յօրինուած այս պարզ ու գեղեցիկ դասական երգը՝ իր խորհմաստ խորհուրդով: (Իսկ թէ ինչու՞ փոքրերը չեն գիտեր, այլ խօսակցութեան նիւթ է...):

Երբ Պէյրութի նաւահանգիստի պայթումէն ետք ՀԱԳ կ'ենթարկուէր այդքան անհրաժեշտ ու անյետաձգելի նորոգութիւններու եւ բարեգարդման, գործաւորներ կ'երթային ու կու գային, կը չափչափէին, կը ծեփէին, կը ներկէին..., յաճախ կը մոմռայի այս երգը աստիճաններէն իջած-ելած ատեններու: Քաղաքացիական պատերազմին դպրոցաշէնքը տասէ աւելի անգամներ վնասուած ու վերաշինուած է. «Ծիծեռնակը բոյն է շինում, եւ շինում է, եւ երգում...»:

Մենք կը շինենք: Պիտի շինենք: Որովհետեւ ուրիշ բան չենք գիտեր ընել, չենք ուզեր ընել: Աղայեանէն հազարամեակներ առաջ ու մեզմէ դարեր վերջ պիտի շինենք ու երգենք, եւ յիշենք...:

Լիբանանի կացութիւնը անկայուն է: Ապագան մշուշոտ է, սակայն մենք պիտի շինենք, որպէսզի մեր մանուկները երգեն ու թնդացնեն շէնքին պատերը շինելու՛, երգելու՛, ապրելու՛ իրենց կամքով: «Խաչին զինուոր»-ով ամրապնդեն իրենց հաւատքը առ Աստուած, «Սարդարապատ» երգելով պահանջատէր մնան, «Մեր հայրենիք»-ով նորոգեն իրենց ուխտը, "راجع يتعمّر لبنان" երգեն, որ հաւատան Լիբանանին: «Չարերը երգ չունին» ըսուած է իրամբ. չարերը կը քանդեն նաեւ: Մենք կը հաւատանք բարիին ու անոր յաղթանակին, հետեւաբար կը շինենք ու կ'երգենք:

Եւ կը խոստանամ: Երբ բնականոն դպրոցական կեանքը սկսի, անպայման պիտի թելադրեմ երգի ուսուցիչին, որ սորվեցնէ այս երգը եւ իբրեւ քայլերգ երգենք ու յիշենք, սորվինք ու գիտնանք, թէ «... նա կրկին բոյն էր շինում, եւ շինում էր, եւ երգում, ամէն մի շիւղ կպցնելիս՝ առաջուայ բոյնն էր յիշում»:

Բարով մնաք.

ԱՐՄԵԼ ԻՌՆԵՇԵԱՆ



Գործ՝ ԱՐՄԻՆԷ ՔԷՇԻՇԵԱՆԻ (9-րդ դասարան)

2021 Յունուարէն ի վեր, կառավարութեան որոշումով բոլոր դասաւանդութիւնները կը կատարուին առցանց եղանակով: Մեր նուիրեալ ուսուցիչները կանոնաւորաբար կը շարունակեն դասաւանդել՝ հակառակ բազմապիսի դժուարութիւններու: Ծնողաց եւ աշակերտներուն գործակցութիւնը նոյնպէս լաւ է, հակառակ որ անոնք ալ կը դիմագրաւեն լուրջ խնդիրներ, յատկապէս համացանցի կապի առնչութեամբ:

Շնորհակալութեամբ կը յիշենք **ԳԱԼՈՒՍ ԿԻՆՊԵԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ**, որ դպրոցիս նուիրեց 35 Lenovo tablet-ներ, որոնք փոխ փրուեցան անոնց կարիքը ունեցող աշակերտներուն:



Ա. դասարանը կ'ունկնկորէ տնօրէնին պատմած հեքիաթը

2020 Օգոստոս 4-ի աղետալի պայթումին պատճառած վնասները վերացնելու եւ այդ առթիւ որոշ հիմնական նորոգութիւններ կատարելու աշխատանքը սկսաւ պայթումէն շաբաթներ ետք:

Ա. ՓՈՒԼ

14 Սեպտեմբեր - 17 Հոկտեմբեր ժամանակաշրջանին ամբողջովին վերանորոգուեցան դասարաններու, միջանցքներու, սրահի, գրադարանի, ուսուցչարանի եւ այլ սենեակներու վնասուած պատուհաններն ու դռները: Հոգաբարձութեան որոշումով, բոլոր երկաթեայ պատուհանները (որոնք ժանգոտած ու խախտած էին) փոխարինուեցան ալյումինէ պատուհաններով: Հոկտեմբեր 24-ին աւարտեցաւ գրասենեակի վնասուած բաժիններու նորոգութիւնը: Սոյն նորոգութիւնները կարելի դարձան շնորհիւ Ամերիկայի հայ աւետարանչական ընկերակցութեան եւ ՀԱԳ-ի շրջանաւարտներու ու բարեկամներու նիւթական աջակցութեան:


Բ. ՓՈՒԼ

Unite Lebanon Youth Project կազմակերպութեան beb w'shebbek (դուռ ու պատուհան) նախաձեռնութեան աջակցութեամբ սկսաւ վերանորոգուիլ երկրորդ յարկը (նախկին «Ծիածան» մանկամտօրը): Վերանորոգութենէն ետք, 2-րդ յարկը պիտի տրամադրուի դպրոցի մանկապարտեզին եւ այլ աշակերտական գործունեութիւններու: Այս աշխատանքը պիտի աւարտի Ապրիլի կիսուն:



Գ. ՓՈՒԼ

Լիբանանեան Nusaned (կ'աջակցիւք) ոչ-կառավարական կազմակերպութիւնը դպրոցին տրամադրեց շատ մեծ քանակութեամբ եւ զանազան տարողութեան ու տեսակի LED լամբեր, որով մինչեւ Ապրիլի կեսը դասարաններու, այլ սենեակներու եւ բացօթեայ տարածքներու լուսաւորման սարքերն ու լամբերը փոխարինուած պիտի ըլլան աւելի արդիական եւ ել. ինսայողական լամբերով:



Դ. ՓՈՒԼ

Լիբանանեան Play for Lebanon ոչ-կառավարական կազմակերպութիւնը ստանձնեց երկրորդ յարկի բացօթեայ բակի հիմնական նորոգութիւնը. ծրագիրը կ'ամբողջանայ մինչեւ դպրոցական տարեշրջանի անարտը:



Ե. ՓՈՒԼ

Վերանորոգութիւններու այս հսկայական եւ լայնձաւալ աշխատանքը ամբողջացնելու համար, հարկ է բարեգարդել նաեւ



ծածկուած բակը, որու սիւները, նստարանները եւ առաստաղը պէտք է ենթարկուին նորոգութեան եւ բարեգարդման: Այս աշխատանքին սիւնականի հայթայթման համար կ'ապաւինինք շրջանաւարտներու, նախկին աշակերտներու եւ բարեկամներու աջակցութեան ու քաջալերանքին: Արդէն իսկ սկսած է նորոգութիւնը այն վնասուած բաժիններուն, որոնք վտանգ կը սպառնալին աշակերտութեան եւ անցորդներուն:

Աստուծոյ սիրոյն ապաւինելով եւ «Ամէն ինչ աշակերտին համար» կարգախօսով կը ծրագրենք մեր ապագան, որպէսզի լիբանանահայ մանուկն ու պատանին մեծնան ոչ միայն հոգեւոր, ազգային եւ քաղաքացիական կուռ դաստիարակութեամբ, այլեւ առողջ ու գեղեցիկ շէնքային պայմաններու մէջ:

պարտութեամբ եւ շնորհակալութեամբ հարկ է արժանին մատուցել 1995-ի շրջանաւարտ ճարտարագետ Եղիկ Թորոսեանին, որ առ ի երախտագիտութիւն իր Մայր Կրթարանին, ճարտարագիտական բոլոր աշխատանքները (ուսումնասիրութիւն, արժեւորում, հսկողութիւն եւ այլն) կատարեց ԱՄԲՈՂՁՈՎԻՆ ՍԻՐԱՅՕԺԱՐ: Հարկ է նշել, որ վերոյիշեալ երեք լիբանանեան կազմակերպութիւններուն ներգրաւումը վերանորոգութեան աշխատանքներուն նաեւ կարելի եղաւ իր միջամտութեամբ:

Եղիկ Թորոսեանին եւ շատ ու շատ այլ շրջանաւարտներու ու նախկին աշակերտներու եւ բարեկամներու զօրակցութիւնը դպրոցին ապացոյց են, որ Վահան Թէքեանի «ինչ որ տուի ուրիշին, վերադարձաւ անուշցած ու զօրացած...» միտքը, լայն պարունակի մէջ կը վերաբերի նաեւ ՀԱԳ-ի եւ ընդհանրապէս հայ դպրոցի ջամբած դաստիարակութեան:




► Երկարամեյա նախկին աշակերտ եւ դպրոցի բարերարներէն, Մօտեռնա գիտական ընկերութեան տնօրէն եւ Օրօրա կազմակերպութեան հիմնադիրներէն դոկտ. Նուպար Աֆէեան Լիբանանի Հանրապետութեան նախագահ զօր. Միշէլ Աունի հրամանագրով Փետրուար 2-ին ԱՄՆ-ի մէջ Լիբանանի դեսպան Կապրիէլ Իսսայի ձեռամբ պարգևատրուեցաւ «Լիբանանի ազգային արժանեաց շքանշան»-ով Քովիտ-19 վարակի դէմ Մօտեռնայի հնարած պատուաստին համար:



► 1955-ի շրջանաւարտ եւ դպրոցի պատուակալ տնօրէն պատմաբան դոկտ. Զաւէն Մարրլեան 30 Դեկտեմբեր 2020-ին լոյս ընծայեց իր նոր աշխատասիրութիւնը՝ «Հայերը համաշխարհային բ. պատերազմին», 472 էջնոց պատկերազարդ եւ քարտէսներով գիրքը: Այս մէկը հեղինակին

11-րդ գիրքն է: Գիրքին տպագրութեան ծախսերը ապահովուած են ՀԱԳ-ի նախկին աշակերտ փրոֆ. Կարէն Մարգարեանի յատկացումով եւ ՀԱԳ-ի նախկին աշակերտ ու դպրոցի բարերար Ռաֆֆի Մանուկեանի մեկենասութեամբ լոյս տեսած գիրքերու վաճառքի հասոյթէն:

► Նոյեմբեր 2020-ին լոյս տեսաւ Քալիֆօրնիոյ նահանգային համալսարանի Նորթրիճի մասնաճիւղի Հայագիտական ծրագրի վարիչ, 1969-ի շրջանաւարտ դոկտ. Վահրամ Շէմմասեանի հեղինակած նոր գիրքը՝ «The Armenians of Musa Dagh: From Obscurity to Genocide Resistance and Fame 1840-1915»: Գիրքը վերոյիշեալ համալսարանի հրատարակած «հայկական շարք»-ի 11-րդ հատորն է:



► Երկարամեյա նախկին աշակերտ Փօլ Եագուպեան, որպէս ՄԴՀԿ-ի Լիբանանի վարիչ մարմինի անդամ, կնքահայր եղած է կուսակցութեան յարած երիտասարդներու խումբի մը եւ անոնց պատգամ ուղղած է 20 Դեկտեմբեր 2020-ին կայացած հանդիսութեան մը ընթացքին:

► ՀԲԸՄ-ի Լիբանանի պաշտօնաթերթ «Խօսնակ»-ի Յունիս-Յուլիս 2020-ի թիւի կողքին վրայ տպուած է տեր եւ տիկ. Վաչէ եւ Թամար (ծն. Գարայեան, 1978-ի շրջանաւարտ) Մանուկեաններու նկարը, Միութեան միջոցով լիբանանահայութեան օգնութեան համար անոնց կատարած մէկ միլիոն տոլարի նուիրատուութեան առթիւ:



► 1974-ի շրջանաւարտ, գործարար գինեգործ Վահէ Քէօշկերեան նշանակուած է Արցախի Հանրապետութեան նախագահի խորհրդական՝ զարգացման ծրագրերու ուղղութեամբ:

► L'Orient-Le Jour լիբանանեան օրաթերթը իր 13 Մարտ 2021-ի թիւին մէջ գրած է, թէ Լիբանանի բարձր համարում ունեցող podcast-ներէն մէկը 2001-ի շրջանաւարտուի տիկին Գարմա Էքմէքճիի «The Diplomoman»-ն է: Podcast-ը անգլերէնով եւ արաբերէնով է եւ կարելի է ստանալ Soundcloud, Apple Podcasts եւ Spotify-ի վրայ:



► 31 Մարտ 2021-ին, 1998-ի շրջանաւարտ, երաժշտագէտ եւ խմբավար մաէսթրօ Կարօ Աւետեան Դամասկոսի Ազգային ֆիլիարմոնիք նուագախումբի հրաւերով Դամասկոսի Տար էլ օփերայի սրահին մէջ խմբավարեց տեղւոյն Ազգային ֆիլիարմոնիք նուագախումբը:

► 2015-ի շրջանաւարտ Յովիկ Արթինեան 1 Նոյեմբեր 2020-ին Լոնտոնի Imperial College-էն յիշատակութեամբ ստացած է Master in Science-ի գիտական աստիճան «Computational Methods in Ecology and Evolution» նիւթով:

ԲԱՆՏԱՒՈՐՈՒԹՅՈՒՆ

• ՀԱԳ-ի 2010-ի շրջանաարտ Հուրի Լեփեճեան-Գասարճեան եւ ամուսինը՝ Ճեֆրի, 9 Հոկտեմբեր 2020-ին Ֆիլատելֆիոյ մէջ բախտաւորուած են առջինէն դուստրով մը՝ Ալիք:

Կը շնորհաւորենք Հուրին ու Ճեֆրին, ինչպէս նաեւ իրենց ծնողները, յարկապէս դպրոցի տիկնանց եւ ծնողաց զանազան մարմիններէն ներս ծառայած տիկին Սիլվա Լեփեճեանը:


• ՀԱԳ-ի 2010-ի շրջանաարտ Արին Պաղտոյեան-Քերքեզեան եւ ամուսինը՝ Յակոբ, 24 Մարտ 2021-ին Պէյրութի մէջ բախտաւորուած են առջինէն դուստրով մը՝ Նալա:

Կը շնորհաւորենք Արին ու Յակոբը, ինչպէս նաեւ իրենց ծնողները, յարկապէս հոգաբարձութեանս արեւապետ պարոն Ներսէս եւ տիկին Լեւոն Պաղտոյեանները:

Մ Ա Հ



† ՀԱԳ-ի 1989-92-ի հոգաբարձու տոքթոր Յարութիւն Նիկոլեան (1945 – 2021), Պսակաճեւ ժառի հետեանքով մահացաւ 3 Մարտ 2021-ին, Պէյրութ:



† ՀԱԳ-ի 1990-ի շրջանաարտ Մեակ Ասիլեան Պէյրութի Ֆուատ Շեհապ պ ո դ ո տ ա յ ի ն վրայ ինքնաշարժի ցաւալի արկածի մը ենթարկուելէ կարճ ատեն ետք մահացած է 10 Փետրուար 2021-ին:

ՆՈՒՐԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԼՐԱՏՈՒ»-ի Նախորդ թիւէն ի վեր շնորհակալութեամբ ստացանք հետեւեալ նուիրատուութիւնները:

ՊԵՅՐՈՒԹ 4 Օգոստոս 2020-ի ՆԱԲԱՆԱԳԻՍՏ ԴԱՅԹՈՒՄԵՆ ԵՏԵ ԴԱՏՈՒԿԱԼ ՏՐՕԲԵՒ ԿՈՉԻՆ ԸՆԴՈՒԱԶՏԵԼՈՎ

Տիկ. Սարկարեթ Սկրուպլեան (Փասատեան) 5000 տոլար
 Շրջանաւարտ օրդ. Մարիա Սեքիլեան (Վենքուլըր) 500 տոլար
 Շրջանաւարտ տիկ. Անի Էլլեգեան-Արթիսեան (ԱՄՆ) 300 տոլար

ՊԵՅՐՈՒԹ ԴԱՅԹՈՒՄԵՆ ԵՏԵ AMAA-ի ՄԻՋՅՈՎ

Տիկ. Հելկա Մաղաքեան-Սարգիս (1971-ի շրջ.) 2500 տոլար
 Ch. Hilfsbund-էն 5000 տոլար

ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՄԵՋ ՀԱԳ-ի ՇՐՋԱՆԱԲՏՆԵՐՈՒ ԵՒ ՆԱԽԿԻՆ ԱՇԿԵՐՏՆԵՐՈՒ ՀԵՏ ԴՊՐՈՏԻ ԿԱԴԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԺԻՐԱՅԻ ՖՐՈՒԼՃԵԱՆԻ ԶԱՆՁԵՐՈՎ, ՊԵՅՐՈՒԹ ԴԱՅԹՈՒՄԵՆ ԵՏԵ ՀԵՏԵԵԱԼ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱԲԱԵՈՒՄՑ ԵՆ

Օրդ. Թալին Բարսեղեան 700 տոլար
 Պր. Ժիրայր Ֆրունճեան 610 տոլար
 Պր. Հարմա Մաղաքեան 300 տոլար
 Պր. Առնոլտ Պապիկեան 250 տոլար
 Տիկ. Շողիկ Զալեան-Դարբինեան 200 տոլար
 Տոքթ. Վիգէն Ահարոնեան 150 տոլար
 Պր. Վարուժ Պետիկեան 100 տոլար
 Ճոյ Զիմըրման 100 տոլար
 Պր. Ռաֆֆի Տիլիգեան 100 տոլար
 Տիկ. Լարա Շահինեան-Տիլիգեան 100 տոլար
 Պր. Ալեքս Պետոս 100 տոլար
 Պր. Վահէ Յովհակիմեան 95 տոլար
 Պր. Շիրազ Իսկենտերեան 71 տոլար
 Տիկ. Անի Պասմաճեան-Արոյեան 65 տոլար
 Օրդ. Անահիտ Պապայեան 59 տոլար
 Օրդ. Սանտրա Պետոս 55 տոլար
 Տիկ. Դալար Աղպաշեան-Թոխտարեան 39 տոլար
 Տիկ. Սիլվան Մուրատեան-Կարապետեան 35 տոլար
 Անանուն նուիրատուներէ 371 տոլար

AMAA-ԷՆ

Պէյրութի պայթումէն ետք վերանորոգութեան յատկացում 7500 տոլար
 Օգոստոսէն Հոկտեմբերի 2020-ի յատկացում 6188 տոլար
 Նոյեմբեր 2020-էն Յունուար 2021-ի յատկացում 13295 տոլար
 Տոքթ. Նազարեթ Տարագճեանի 2021-ի տարեկան յատկացումը 5000 տոլար
 Նոր տարուայ նուէր ՀԱԳ-ի անձնակազմին 4000 տոլար

ԱՅԼ ՆՈՒՐԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տիկ. Սօսի Եւ պարոն Արմէն Պալեան Նոր տարուայ առիթով 200 տոլար
 Շրջանաւարտ Լեւոն Պապիկեան (ԱՄՆ) 200 տոլար
 Տիար Զաւէն Ղարիպեան 100,000 լ.ո.
Դոկտ. Զ. Մարրիեանի «Հայերը Համաշխարհային Բ. Պատերազմին» գիրքին առ ի գնահատանք դպրոցի «Դոկտ. Զ. Մարրիեան Կրթական Ֆոնտ»-ին

ՀԱԳ-ի ՏՐՕԲԵՆՈՒԹԻՒՆ, ՈՒՄՈՒՅՉԱԿԱԼ ԿԱԶՄ ԵՒ ԴԱՇՏՏԵՆՈՒԹԻՒՆ

Յովսէփ Գարամանուկեանի Եւ Սեւան Ալեքսանտրեանի յիշատակին 200,000 լ.ո.
 ՀԱԳ-ի ուսուցիչներ Հաննա Եւ Ռոզ Պշարաներու աղջկան ամուսնութեան Եւ թոռան ծնունդին առթիւ 200,000 լ.ո.

Խմբագիր՝ ՏՐՕԲԵՆ ՊՈՎՏ. ԱՐՄԵՆ ԻՐԻՆԵՅԼԵԱՆ
 Խորհրդատուներ՝ ՏԻԻՐ ՆԵՐՍԵՍ ՊԱՐՏՈՅԵԱՆ
 ՏԻԻՐ ՅԱԿՈԲ ՏԵՄԻՐՃԵԱՆ
 Էջաղրում՝ ԱՆԻ ՔԵՏԵՆԵԱՆ-ՊԱՍԵԹ
 Մ.Ա.Յ.Ա.Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՕՍԿԱՆ ԳՐԱՏԵՆԵԱՎ

Y.M. PHILIBOSSIAN ARMENIAN EVANGELICAL COLLEGE
 P.O. Box 3672-Beirut
 Tel: 01 349 816 Fax: 01 751 469
 E-mail: A_E_C@cyberia.net.lb
 Website: aecbeirut.edu.lb
 Facebook: Armenian Evangelical College